№ 264 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՆՈԵՄԲԵՐԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆԱՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՆՈԵՄԲԵՐԻ № 264

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—58.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱԾ **1913** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.։ Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կոպ.։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Ելրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան ԶՐԻԱԲԱՐ հետեւեալ 2 գրքերը.

1) „Մշակ" եւ հայ կիրը", որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչեւ 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և քանաքիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջադիմութեան գործին մասնաւորապէս։ Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիւր պատկերով եւ մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով։

2) „Մշակի" քառասնամեակ" Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրա։ Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Չէօ Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները։

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.։ Ձանապարհածախքը՝ 15—20 կոպ. գնողի վրա։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Адресъ редакціи: TIFLIS, Rédaction du journal „MSHAK"

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԵ ԸՍՏ ՏԱՐԱ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով տեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԱՐՓՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Երեքշաբթի, նոյեմբերի 27-ին

ԳՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՑՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Իր սովորական երեկոյթի փոխարէն

Մասնակցութեամբ ՀԱՅՑՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դերասանական խմբի

Ցերեկ կունենայ ներկայացում

I

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԽՕՍԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Կօմէդիա 1 գործ., հեղ. Թրխատան-Բաերլի, թարգմ. Ա. Արմէնեանի

II

ՀԷՔԻԱԹ

Դրամա-էաիւդ 1 գործ., հեղ. Մկր. Մանուէլեանի (արեւելեան կեանքից)

III

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Մասնակցութեամբ օպէրային դերասանուհի-դերասանների՝ տ.տ. Սկէօկոյի, Պասխալօվայի, Սարաճեվայի, պ.պ. Վլոճսկիի, Լազարեվի, Կայդաճովի եւ Կապլենիցկիի։

IV

ՀԱՄԲՕՑՐ

Կօմէդիա-ֆէյերիա 1 գործ., հեղ. Թէօդօր Դը Բանվիլի, թարգմ. Ա. Արմէնեանի։

Խաղամիջոցներին կը նուագէ օպէրային լաւագոյն նուագախումբը։

ՏԵՂԵՐԻ ԴՆԵՐԸ ԴԱՍՏԱՐԱԿԱԾԻՆ ԵՆ։

Թատրոնում տեղ չեն ունենալու ոչ բարեգործական նպատակով բուֆետ և ոչ էլ այլ վաճառումներ։

Նուէրներ ընդունվում են շնորհակալութեամբ։

Տոմսակները վաճառվում են Կնկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площ. № 7. с. д.), իսկ ներկայացման օրը Ազգային թատրոնի կասսայում։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

(ե.) 854. 3—3

Բժիշկ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Երքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔՈՒՖԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլինները, ՐՕԴԻՆ պղէպղ բանները և էլեկտրականութեամբ։

Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։ Սօլօլակ, Բէհրութեան փող. № 23 (անկիւն Դանօվսկայա)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 699. 100—55

Բժիշկ

Յ. Մելիք-Նուբարեան

Երքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։

Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակսով։

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

(առաւօտեան 12—1 ժ.
Ամեն օր (երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Ռուիչեվսկայա 10 (Լերմօնտովսկ. դեղատան դիմացը)։

(հ. հ. կ.) առ. 746. 100—24

Բժիշկ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և սաամոքսա-աղիքային հիւանդութիւններ։

Պրօֆ. Mathien-ի մանազիատական կլինիկայից—Պարիզում։

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։
(երեկ. ժ. 5—7-ը։

Միխայլովսկի պր. 86, տէլէֆ. № 576.

(հ.հ.կ.) առ. 179. 100—61

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ա. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է առամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական առամներ, յ առամի հեռացում, (առանց ցաւի)։

Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.

Անկիւն Աբաս-Աբադսկայա հրապարակի և Լերմօնտովսկայա փողոցի, № 1.

(հ.հ.կ.) առ. 849. 100—4

ՄԱՔՍԱՒՈՒՄՆԵՐԻ ԺԽՈՐՈՒՄ

—

Այն ժամանակ, երբ պատերազմող կողմերը ցանկանում են զէ՛ք քերը վայր դնել, եւրօպական պետութիւնների ժէջ նկատւում են զէնքեր վերցնելու սպառնալիքներ։

Աչքի անցրէք այն տեղեկութիւնները, որոնք գալիս են Աւստրիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից։

Ռազմական պատրաստութիւններ։

Աւստրիան զինւորական մասերի փոխադրութիւններ է արել, այնքան ռազմական կարդադրութիւններ է արել, որ քաղաքական աշխարհը չի զարմանայ, եթէ լսի այդ պետութեան ներգործական քայլերի մասին։

Գերմանիայի պետական անձերը յայտարարեցին ի լուր աշխարհի, որ թէև Գերմանիան խուսափում է բարդութիւններից, բայց պատրաստ է ամեն րօպէ պաշտպանելու իր դաշնակից պետութիւնների շահերը։

Ֆրանսիան մի շարք ռազմական կարգադրութիւններ արեց ռազմական նպատակով և միջոցներ ձեռք առաւ կատարելապէս պատրաստ հանդիսանալու անհրաժեշտութեան րօպէին։

Ինչքա՛ն են այդ պատրաստութիւնները։ Մի՞թէ պետութիւնները լուրջ կերպով պատրաստւում են պատերազմական սոսկալի ժխորի մէջ գլորելու իրանց։

Ոչ ոք չէ ուզում պատերազմել, բայց քաղաքական նոր հանգամանքները, որոնք առաջ են գալիս բալկանեան պատերազմից, շօշափւում են թէ միջազգային և թէ մասնաւոր շահեր, որոնք առիթ են հանդիսանում գժտութեան, անհամաձայնութեան և դժգոհութեան։

Եւ իրաքանչիւր պետութիւն հոգ-ը չէ՛ գուցէ իր շահերը վտանգվեն և նա ունենայ անդառնալի կորուստներ, որոնք ապագայում աւելի ևս ծանր կորուստների հիմք ծառայեն։

Պատերազմի ուրուականը սպառնական արտայայտութեամբ կանգնած է եւրօպական պետութիւնների առաջ։

Եւրօպական հասարակութիւնը յուզված է և անհանգիստ օրեր է անցկացնում։ Նա չէ՛ ուզում պատերազմ։ Այդ նա արտայայտում է ամեն դէպքում, մասնաւոր խօսակցութեան մէջ, հասարակական ժողովներում, մամուլի էջերում, հանրային միտինգներում։ Բոլոր ժողովները և համագումարնե-

րը, որոնք տեղի ունեցան Գերմանիայում, Ֆրանսիայում և Բազէլի ժողովում, ցոյց են տալիս, որ հասարակութիւնը լուրջ կերպով երկիւղ է կրում պատերազմական մղձաւանջից, ուստի նա ամենավճռական կերպով բողոքում է պատերազմի դէմ։

Հասարակական կարծիքը, որ համակրում է բալկանեան ժողովուրդների ազատագրութեան, այլ ևս չէ ատխորժում տեսնելու պատերազմի շառնչութիւնը, որովհետև այն, ինչ որ անհրաժեշտ էր բալկանեան քրիստոնեաների ազատագրութեան համար, արդէն արված է, և շարունակել պատերազմը՝ դա կը նշանակէր նուաճողական կամ զուտ քաղաքական նպատակների ծառայել, իսկ երբ խնդիրը ստանում է այդպիսի բնաւորութիւն և կերպարանք, այն ժամանակ ամեն մի ուրիշ պետութիւն էլ կարող է իր նոյնատեսակ պահանջները առաջադրել և նրանց համար զինաշարժ կատարել։

Զինադադարը եթէ լինէր պատերազմի վերջաւորութիւն, դա երևի կը լինէր հանգստութեան գրաւական։ Բայց զինադադարը միայն մի միջոցառ է բանակցութիւնների և պայմանաւորութիւների համար։

Եւ հէնց այդտեղ է գլխաւոր հանգոյցը։

Բոլորին շահագրգռողը այդ պայմանաւորութիւների կամ իրերի նոր դասաւորման ծրագիրներն են։

Եւրօպական պետութիւնները համարում են, թէ այդ ծրագիրների էութեան և որակութեան վերաբերութեամբ նրանք ունեն իրանց սեփական հայեցակէտները և որ իրանց է վերապահված խմբագրել և սրբագործել քաղաքական նոր դասաւորութիւների դաշնագիրները, մանաւանդ այն շրջանին դաշնագիրներով և դասակարգութիւններով (Բերլինի, Միւնշտէգի, Ռեվէլի) ենթակայ են եղել նրանց հեղինակութեանը և ձեռնհասութեանը։

Զինադադարը տեղային չափազանց մեծ աշխատանք է տուել ոչ միայն թիւրքիայի և բալկանեան դաշնակից պետութիւնների, այլ և ամբողջ Եւրօպայի քաղաքագէտներին, մի աշխատանք, որից եւրօպական հասարակութիւնը մի բան է տենչում—խուսափել պատերազմից և ստեղծել տանելի վիճակ Մերձաւոր Արևելքում։

Ա. Քալանթար

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 և 25 նոյեմբերի

Կ. Պօլիս.—Մինիստրների խորհուրդը վերջնականապէս մասնակցից հաշտութեան բանակցութիւններ վարող լիազօրներ՝ Թէվֆիկին, Լօնդոնի դեսպան Օսման-Նիզամին, Բերլինի դեսպան Րէշիդին և առևտրի մինիստրին։ Ուղարկվում են նաև Բ. Դրան երկու իրբիտկօնսուլտ։

—

Սօֆիա.—Հաւանական լիազօրներ բանակցութիւնների համար են՝ Դանէվը և Լօնդոնի դեսպան Մաջարովը։

—

Կ. Պօլիս.—Թէվֆիկ փաշան հրաժարվեց խաղաղ բանակցութիւն վարող լիազօրի կոչումից։ Առաջին լիազօր ներկայանալու է Րէշիդ փաշան, երկրորդը՝ Օսման-Նիզամի փաշան, երրորդը՝ Հուսմի դեսպան Նաբի-բէյ, ասիստէնտ լինելու է գնդապետ Ալի-Րիզան։

—

Սօֆիա.—Լիազօրներ բանակցութեան համար նշանակվեցին Դանէվը, Մաջարովը, գնեռալ Պապրիկովը և գնդապետ Իսաեվը իբրև էկսպերտ-պատգամաւոր։ Դանէվը մեկնեց Բուխարեստ, այնտեղից՝ Լօնդոն։

—

Աթէնք.—Լիազօրներ խաղաղ բանակցութիւնները վարելու համար նշանակվեցին արտաքին գործերի նախկին մինիստր Սկուլուդիս, մակեդոնացի զօրքի շտաբի կառավարիչ գեն. Դանգլիս, Վիէննայի դեսպան Մարէյա, Լօնդոնի դեսպան Դէնադիոս, միջազգային իրաւունքի պրոֆեսօր Փրանց. Լիազօրները Լօնդոն են մեկնում վաղը։

—

Աթէնք.—Վինիզէլօսը լինելու է Բուխարեստի ներկայացուցիչը Լօնդոնում կայանալիք խաղաղ բանակցութիւնների ժամանակ։

—

Բելգրադ.—«Ցրիքունայի» տեղեկութիւնների համաձայն, բալկանեան դաշնակից պետութիւնների լիազօրները Լօնդոն մեկնելուց առաջ մի օրով ժողովվելու են Բելգրադում։

Արտաքինգործական զինւորական կցորդները վերադարձան Բելգրադ։

—

Կ. Պօլիս.—Խաղաղ դաշնագրի մէջ մտնելու է բուլգարական էկզարխութիւնը Սօֆիա փոխադրելու հարցը։

—

Սօֆիա.—«Միրը» մատնանշում է, որ սոսկ դէպի մեծ պետութիւնները ունեցած ուշադրութիւնից դաշնակիցները համաձայնեցին Թիւրքիայի խընդիրքին զինադադարի մասին մինչև Դարդանէլի և Կ. Պօլսի գրաւումը, որպէսզի բալկանեան հարցը չը դառնայ եւրօպական հարց, որ կարող էր մեծ պետութիւններին պատերազմի թեքել։ Լրագիրը յոյս ունի, որ դաշնակիցների այդ վարմունքը կը գնահատվի ըստ արժանոյն Եւրօպայից, որը և ձեռնհաս է լուծելու այն բոլոր հարցերը, որոնք ապագայում կարող են խախտել եւրօպական խաղաղութիւնը։

Միևնոյն լրագիրը գժգոհութիւն է յայտնում թիւրքական այն սուտ տեղեկութիւնների առիթով, որ վերաբերում են պաշարված քաղաքների զօրքերին մթերքներ մատակարարելուն. այդ տեղեկութիւնները հակասում են արձանագրութեան յօդուածներին։

Մատնաժոդով հաստատվեց Ֆերդինանդ թագաւորին ընդունելու ծրագիրը մշակելու համար։

—

Ցէտինիէ.—Գերմանական դեսպանի խնդիրքի համաձայն կառավարութիւնը ուղարկում է պօլուչիկ Սիմոնիչին և պօլպօրուչիկ Զուրկովիչին հաղորդելու Սկիւտարի կօմենդանտ Հասան-Րիզային զինադադարի մասին։

—

Հռոմ.—Պաշտօնական։ «Ցրիքունան» ապացուցանում է, որ Իտալիան բոլոր ոյժերով պէտք է դիմադրէ Սերբիային Ադրիատիկ ծովում նաւահանգիստ ձեռք բերելու գործում։ Իտալական շահերը այդ աւելի են պահանջում, քան աւստրիական շահերը։

—

Վիէննա.—«Փրէմդէնբլատի» տեղեկութիւնների համաձայն Աւստրօ-Ունգարիան համաձայնել է անգլիական առաջարկութեանը դեսպանների համաժողով գումարելու վերաբերութեամբ։ Դումարելու տեղը դեռ որոշված չէ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 և 25 նոյեմբերի

Կ. Պօլիս.—Զինապետարից առաջ թշնամին կատաղութեամբ ռմբակոծեց Ադրիանուպօլիսը, բայց վեց-ժամեայ կռւից յետոյ յետ մղվեց։

—

Աթէնք.—Հերքվում է Բուխարէստից տարածված այն տեղեկութիւնը, թէ Նուիթիների Մակեդոնիայի յունական իշխանութիւնների կողմից։

Եպիրոսում գրաւված է Կօրիցան. մտցված է յունական վարչութիւն։ Գրաւվել են Սիրակօն և ս. Գէորգ վանքը, որ գտնվում է Եանինայից 4 ժամեայ հեռաւորութեան վրա։

Ռունական նաւատորմի մի մասը Սանտ Կարանտում զօրք իջեցրեց ափը, չը հանդիպելով դիմադրութեան։

Պաշտօնապէս հերքվում է Վալօնայի ռմբակոծութիւնը. յունաց մի ռազմանաւ միայն մի քանի անգամ կրակ է բացել Վալօնայի մօտ ափին գտնվող մի ալբանական հայրենակցային խմբի վրա։

—

Կ. Պօլիս.—Գալիպօլում բուլգարական կոմիտաջիների դէմ կռւելու համար գեներալ Տուրղութ փաշայի կազմակերպած թիւրքական հրոսակախմբերը կողոպտել են 16 քրիստոնէական գիւղեր։ Բռնելով քահանաներին և նօտաբլներին, աւազակները շորթում են դրամներ. մերժողներին և երեխաներին սպանում են։ Դիմադրելու փորձ անող բնակիչներին հրոսակախմբերը կոտորում էին կանոնաւոր զօրքերի օգնութեամբ։ Գալիպօլիի փոխ-հիւպատոսը բողոքեց մեծ պետութիւններին, որի պատճառով ֆրանսիական դեսպանատան կարգադրութեամբ «Վիկտոր Հիւգօ» յածանաւը եկաւ Գալիպօլի։ Դժբաղդաբար, այս միջոցը ուշացաւ, որովհետև քրիստոնեաների կոտորածը արդէն վերջացաւ։

—

Ցէտինիէ.—Զերնօգորական ներկայացուցիչ լէյտենանտ Զուրկովիչը, գալով Տարաբօշ, ընդունվեց Սկիւտարիի զօրքերի շտաբի կառավարչից և Տարաբօշի կօմենդանտից։ Զուրկովիչը յայտնեց, որ նամակ է բերել Հասան-Րիզայի համար։ Թիւրք օֆիցէրներն առաջարկեցին նամակը իրանց յանձնել. Զուրկովիչը պատասխանեց, թէ լիազօրված է նամակը յանձնել անձամբ Հասան Րիզային։ Չը թողնվելով Հասան-Րիզայի մօտ, Զուրկովիչը նամակը հետ մեկնեց։ Թիւրքական արտիլէրիան իսկոյն ուժեղ կրակ բացեց չերնօգորական դիրքերի վրա, չերնօգորցիք չը պատասխանեցին։ Այսօր առաւօտից թիւրքերը ամբողջ գծի վրա սաստիկ կրակ բացին թնդանօթներից ու հրացաններից։ Չերնօգորական զօրքերի հրամանատարը կարծում է, որ կէսօրից յետոյ անկարելի է լուռ մնալ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

(Պետհրատի հետ.)

24 և 25 նոյեմբերի

Պարզիկով ռեպետիցիա.— Պարզիկով ռեպետիցիա է կատարում Ալեքսանդրապոլի Ազգային թատրոնի դերասանների հետ։ Ներկայացումը տեղի կունենա 27 նոյեմբերին։

(Պետհրատի հետ. Գորմ.)

24 և 25 նոյեմբերի

Ղազանչեցի.— Ղազանչեցի ժողովրդական երգիչ-նվագող է։ Ներկայիս նա գտնվում է Ալեքսանդրապոլում։ Ղազանչեցին ունի մեծ քանակությամբ ժողովրդական երգեր, որոնք նա կատարում է սազի նվագակցությամբ։

Լոռիում.— Վերջերս Լոռիում հայտնաբերվել են հնագիտական մեծ արժեք ներկայացնող մի շարք իրեր։ Դրանց մեջ կան հնագույն դրամներ, զարդեր, կավե անոթներ և այլն։ Հնագիտական այդ իրերը ուսումնասիրելու նպատակով Լոռի է մեկնել Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Ա. Ղալանթարը։

Ծաղկաձորում.— Ծաղկաձորում կազմակերպվել է գյուղատնտեսական կոոպերատիվ։ Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 200-ի։ Կոոպերատիվն ունի 3000 ռուբլի կապիտալ։

Ալավերդում.— Ալավերդու պղնձահանքերի բանվորները ստացել են 4500 ռուբլի աշխատավարձ։

Հոկտեմբերյանում.— Հոկտեմբերյանում կազմակերպվել է սպառողական կոոպերատիվ։ Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 200-ի։ Կոոպերատիվն ունի 36,000 ռուբլի կապիտալ։

Ծաղկաձորում.— Ծաղկաձորում կազմակերպվել է Ս. Գրիգորյանի անվան գյուղատնտեսական տեխնիկում։ Տեխնիկումում ընդունվելու են 80 հոգի։ Դասընթացները տևելու են 3 տարի։

Ախուրյանում.— Ախուրյանում կազմակերպվել է գյուղատնտեսական կոոպերատիվ։ Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 150-ի։ Կոոպերատիվն ունի 2000 ռուբլի կապիտալ։

Ալավերդում.— Ալավերդու պղնձահանքերի բանվորները ստացել են 18,000 ռուբլի աշխատավարձ։ Հայտարարված է նաև 6000 ռուբլի պարգև։ Հայտնի է, որ ընդհանուր առմամբ Ալավերդու պղնձահանքերի բանվորները ստանալու են 380 000 ռուբլի։

Ջուլֆայում.— Ջուլֆայում կազմակերպվել է սպառողական կոոպերատիվ։ Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 150-ի։ Կոոպերատիվն ունի 1000 ռուբլի կապիտալ։

Ղամարլուում.— Ղամարլուում կազմակերպվել է սպառողական կոոպերատիվ։ Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 200-ի։ Կոոպերատիվն ունի 1000 ռուբլի կապիտալ։

Ղամարլուում.— Ղամարլուում կազմակերպվել է գյուղատնտեսական կոոպերատիվ։ Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 150

✦ Կ. Պոլիսը չորս կողմից ամրացնում են խրամատներով ու ռազմական պատնէշներով. Սակայն յորդ անձրևները սպառնում են բոլոր կառուցուածքը ոչնչացնել։

✦ Բոլգար պատգամաւորները մտան Աչբրնուպոլիս քանակցելու բերդի անձնատուր լինելու մասին։

✦ Ոսմիկանութեան դեպարտամենտը արգելեց կինեմատոգրաֆներին ցոյց տալ պատկերները Լ. Տոլստոյի ընտանեկան կեանքից։

✦ Մինչև Լոնդոնի բանակցութիւնները Բերլինում տեղի կունենայ թիւրք լիազօրների խորհրդակցութիւնը գերմանացի դիպլոմատների հետ։

✦ Բերլինի լրագիրներում անհանգիստ տեղեկութիւն է տրված այն մասին, որ Ռուսաստանը իբր պաշտպանում է Թիւրքիային Անդրբոնուպոլիսը բոլգարներին չը յանձնելու գործում։

✦ Բեսարաբիայի ազգանական գաղն առաջարկեց պրինց Սաքսէ-Գոբուրգին։

✦ Անգլիական դիպլոմատական շրջանների մէջ հաղորդում են, որ հաշտութեան բանակցութիւնները շարունակվելու են մինչև յունվարի 1-ը (ն. տ.)։

✦ Ռուսաստանին տեղեկութիւն տրվեց, թէ Բրիւսէլում խուզարկութեան ժամանակ գտնվել է ահագոր գերմանական դաշինքի մի օրինակ, որի այժմ երկու մեծ պետութիւնները պաշտպանելու են ահագրական պահանջները Բալկաններում։

✦ Ֆերդինանդ Թագաւորը հրաւէր ստացաւ սուլթան Մէհմէդ Վ-ից այցելել Ցարգրադ և ոտնել զինադադար կայացնելը։

✦ Թիւրքիայի և երեք բալկանեան պետութիւնների միջև զինադադարը ստորագրվեց Թիւրքական երկաթուղային վագոնում, որ յետոյ Թիւրքերը ընծայեցին Ֆերդինանդ Թագաւորին։ Զինադադարը ստորագրելուց յետոյ Թիւրք լիազօրները գրկախառնվեցին ու համբուրվեցին բոլգարական արտաքին գործերի մինիստր Դանէվի հետ։

✦ Աւստրիական դիպլոմատական շրջաններում կարծում են, որ պատերազմի վախճանի ամենակարևոր հետեւանք կը լինի մերձեցումն Թիւրքիայի և Բոլգարիայի միջև։

✦ Պետերբուրգի դիպլոմատական շրջաններում համոզված են, որ պատերազմը իրապես աւարտված է։ Սպասվում է, որ բալկանեան պետութիւններին կաջողվի կապել ուժեղ դաշնակցութիւն, որին, Ռուսաստանի մօրալ աջակցութեամբ, գժուար չի լինի ներհակել Աւստրիայի և Գերմանիայի ոտնձգութիւններին։ Նեղուցների հանձգութիւնները կը ջնջվեն։

✦ Եւրոպական մամուլի կարծիքով գերմանական կանցլերի ձառը ուղղված էր բացառապէս Ռուսաստանի դէմ։ Անգլիական լրագիրները նկատում են, որ եթէ Գերմանիան օգնէ Աւստրիային, այն դէպքում Ֆրանսիան նոյնպէս կօգնէ Ռուսաստանին։ Այս տեղից կարող է սոսկալի վոնդ եռալ, որի առաջը Եւրոպան պէտք է առնէ։ Կանցլերը ճնշում էր գործ դրնելու ոչ միայն Ռուսաստանի, այլ և Աւստրիայի վրա։

✦ Ռուսական սահմանագլխում Գերմանիան տեսնում է մի շարք ռազմական պատրաստութիւններ։

✦ Պետերբուրգի շրջակայքում տեղի են ունենում խոշոր գործադուլներ տեսեական հողի վրա։

✦ Պետերբուրգում 1913 թ. մայիսի վերջերին միաժամանակ կը կայանան առողջաբանական, Պիրագովեան և սառցային գործի համագումարներ։

✦ «Բէчь»-ում տպված է. «Այս օրերս պաշտօնական Հեռ. Գործակալութիւնը հաղորդեց, որ Էդուարդ Գրէյը մերժեց միացեալ հրէական կոմիտէին վերաքննել 1859 թ. պայմանագիրը Ռուսաստանի հետ՝ վերացնելու համար այն ճնշումները, որոնց ենթակայ են անգլիական հրէաները։ «Times»-ի տեղեկութիւններից երևում է, որ պաշտօնական գործակալութիւնը տենդենցիոզ կերպով է տուել այդ տեղեկութիւնը։ Գրէյը իր պատասխանում է, թէ այդօրինակ դիմումը ռուսական կառավարութեանը անօգուտ կը լինէր, որովհետև բրիտանական կառավարութիւնը արդէն երկու անգամ յարուցել է այդ հարցը, այսինքն 1862 և 1881 թ. թ., սակայն չէ կարողացել ցանկալի հետևանքների հասնել»։

✦ Նիւ-Եօրկում 15 կառուներ խեղդամահ արին 70 տարեկան Ջերդրիխին, որ թողեց 5 միլիոն դոլլար կարողութիւն։

✦ Ֆիլիպպեան կղզիների վրա վերջին տայֆունի ժամանակ զոհվեցին 17,000 մարդ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

24 նոյեմբերի

ՐՕՍՏՕՎ Դ-վ.։ *Րօստովից 15 վերստ հեռաւորութեան վրա Վլադիկավկազի երկաթուղու № 4 պօստային գնացքի վրա յարձակվեցին զինված չարագործներ, որոնց ձակվեցին զինված չարագործներ, որոնց արձակած գնդակներից վիրաւորվեցին ճանապարհորդներից երեքը։ Չարագործները Պարամանօվների ընկերութեան դրամատուրից յափշտակեցին 55,000 ր.։*

ԱԽԱԼՔԱԼԱՔ։ *Դիւերվայ ժամը 1-ին ըզգացվեց ուժեղ երկրաշարժ։*

ՎԱՐՇԱՎԱ։ *Վախճանվեց Վարշավայի կաթոլիկների արքեպիսկոպոս Վիկէնդի Պօպելը։*

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ *Զինւորական դատարանը կողոպտիչների գործի առիթով 8 մարդու դատապարտեց մահվան պատժի, արդարացրեց երկու հոգու։*

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանը „Новое Время“-ի խմբագիր Սուվօրինին դատապարտեց 25 ր. տուգանքի ատանց պալատական ցէնզորի Ս. Աստուածածնայ վանքի օծման նկարագրութիւնը տպելու համար, մինչ օծմանը ներկայ էին Նոցին Մեծութիւնները։

Առաւել մինիստրի նախագահութեամբ կայացաւ բանուորներին ապահովագրող խորհրդի առաջին նիստը։

Մինիստրների խորհրդին ներկայացրվեց ֆինանսների մինիստրութեան առաջարկը՝ տարածելու պետական բանկի գործունէութիւնը ֆինլանդիայի վրա։

ՄՕՍԿՎԱ։ „Р. Вѣд.“-ի խմբագիրը ենթարկվում է դատական պատասխանատուութեան։

ՊԱՐԻԶ։ *Նախագահ Ֆալիէրը բացեց ասմօտօքների ցուցահանդէսը։*

ՊԱՐԻԶ։ *Սեն-Դընիի էլեքտրական կայարանի հրդեհի պատճառով քաղաքի շատ մասերը մնացել են առանց լուսաւորութեան։*

25 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեց „Ст. Отеч.“ № 12-ը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Գ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

10000 ՐՈՒԲԼԻ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ես 10,000 րուբլի կը վճարեմ Ձեր սիրած որևէ բարեգործական հիմնարկութեան, եթէ կապացուցվի, որ ներկայ կարծրները մէկին ու մէկը չէ համապատասխանում օրիգինալին։

Թժ. Ա. Վօլկ. Մօսկվա։ ...Փ-ը Մէյէրի Սոմօխսիդէնը» ոչ միայն ժամանակաւորապէս անհետացնում է կապուտիկը, այլ և միանգամայն բուժում է նրան։

Թժ. Իւրգենս. ՍՊԲ. ... *Սամարքադումի ժամանակ հետևանքները հրաշալի են։*

Թժ. Վ. Գերիգորովիչ. Սեվաստօպոլ։ ...Ազդեցութիւնը քրօնիկ. կատարի ժամանակ ամենալաւ ներգործութիւնն է անում և ցաւը չէ առաջացնում։

Թժ. Բիրկին. Սամարա։ ...Կարճժամանակեայ (3 շաբ.) գործածութիւնից յետոյ թեթևութիւն զգացվեց, իսկ առաջներում լուծողականների ամենամեծ չափին անգամ անհետանալը էր մնում։

Թժ. Յովհաչով. Լիպեցկ։ ...Փորը ուռած լինելը, կրծոցկրի տակ ծանրութիւն զգացուը, թուլացրը և սոսմաքսի տարը նուազել են։ Բնական կատարումը չատ հեշտ։ Մայասիլը չէ անհանգստացնում։ Գնդաները այլ ևս դուրս չեն գալիս։

Դ-ր Մէյէրի Սօմօխսիդէնը միանգամայն անվնաս է։ Բուժումը տեղի է ունենում կատարեալ։

ԴԵՂԱՏՈՄՍԸ

Մօտակայ դեղատնից կամ դեղավաճառանոցից վերցրէք 2 շաքարվայ գործուածքի համար Դ-ր Մէյէրի Սոմօխսիդէնից մի արկղիկ, ընդունեցէք քնելուց առաջ 2 տաբլէտկա և առաւօտեան Դուք կունենաք գլուխն և միանգամայն նօրմալ բնական կատարումն։ Ցետոյ ընդունէք 1—2 տաբլէտկա օրական 3 անգամ, մինչև որ Ձեզ մօտ մարսողութիւնը նօրմալ գլուխին կը տանայ։ Մանրաման ցուցումները և առողջական ծանօթագրութեան համար օգտակար կանոնները կցված են իւրաքանչիւր տրաբկին։

ՓՈՐՁԵԼԸ ՁՐԻ

Գրէք ինձ մի բացիկ և ես խնայն կուղարկեմ Ձեզ նմուշը ձրի։ Իմ հասցէն՝ Д-ръ Мед. Антонъ Мейеръ. Химич. Лабор. Отд. А., С.-Петербургъ, Екатерининскій кан., 29—3.

(4,11,18) (П. *157985*) 4—1

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Ադրագ գնացք** № 2—10 ժ. 12 ր. առ., հասնում է Ադստաֆա 12 ժ. 30 ր., Դանձակ 2 ժ. 55 ր., Ելախ 4 ժ. 26 ր., Հաջի-Գաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.։ **Պօստովայ գնացք** № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Դանձակ 6 ժ. 41 ր. առ., Ելախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Գաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.։ **Մարդաւար գնացք** № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Ադստաֆա 8 ժ. 51 ր. եր., Դանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Ելախ 12 ժ. 56 ր. գիշ., Հաջի-Գաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.։ **Խառն գնացք** № 106 (Մարդատարի արագութեամբ տալանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 10 ժ. առ., Դանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Ելախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Գաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.— **Մարդաւար գնացք** № 11—10 ժ. 2 ր. գիշ., հասնում է Մխխայլօվո 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ **Պօստովայ գնացք** № 3—9 ժ. 50 ր. առ., հասնում է Մխխայլօվո 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ **Մարդաւար գնացք** № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Մխխայլօվո 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.։ **Խառն գնացք** № 107 (մարդատարի արագութեամբ տալանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Մխխայլօվո 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ՏԻԲԻԼԻՍԻ.—**Պօստովայ գնացք** № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպոլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց երևան մանելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդ.-ապրանքայաւ գնացք** № 8/79 (միայն II և III կարգի վագոններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպոլ 12 ժ. գիշ., Էջմիածին 5 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Նախիջևան 6 ժ. 51 ր. առաւ.։ **Մարդաւար-ապրանքայաւ գնացք** № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 7 ժ. 14 ր. առ., Դարա 10 ժ. 48 ր. առ.։

ԲՕՐԹՕՄ.— **Մարդաւար գնացք** № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Թօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Ադրագ գնացք** № 1—9 ժ. 10 ր. եր., **Պօստովայ գնացք** № 3—9 ժ. առ.։ **Մարդաւար գնացք** № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ **Խառն գնացք** № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.— **Ադրագ գնացք** № 12—8 ժ. 50 ր. առ., **Պօստովայ գնացք** № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ **Մարդաւար գնացք** № 6—5 ժ. 15 ր. ցեր.։ **Խառն գնացք** № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ՏԻԲԻԼԻՍԻՑ.— **Պօստովայ գնացք** №40/3—8 ժ.առ.։ **Մարդ.-ապրանքայաւ գնացք** № 6К./5—1 ժ. 28 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքայաւ գնացք** № 89/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՕՐԹՕՄԻՑ.— **Մարդաւար գնացք** № 9/10Б—11 ժ. 22 ր. առ.։

ՄԷԿ ՐՈՒԲԼԻ

և 95 կօպ. արժէ մեր աճկէր ժամացոյցը, պատկ. 1-ին տեսակի, անգլիական սև պողպատից, ընթացքը հարնող, 18 քարով, լարումը կտիպ՝ 46 ժամը մի անգամ, փոշուց պահպանող ապակիով, 10 տ. երաշխաւորութեամբ։ Փաքը. պահանում մեծ քանակութեամբ դնովիլու պատճառով նշանակված է էժան գին։ Վերադիր մեծ. ոտարկիւղուց ճանապարհած. հաշվում է 45 կ., Սիբիր 75 կ.։ Երեք և ատելի ժամաց. պատուիրելուց՝ ճանապարհածախքը մեր հաշվին։ Ձր հատանած դէպքում չեմ ներ վերցնում։

Торг. Домъ Бр. ЛЮБКА, ЛОДЗЬ. М. 61.

(Հ.) (Л. *14711*) 3—3

Վաճառվում են

Յ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

1) *Ի՞ՆՉՊԷՍ ՄՇԱԿԵԼ ԲԱՄԲԱԿԸ.* Նկարներով, գինն է 15 կօպ.

2) *ՁԵՌՆԱՐԿ ԳՕՐԾՆԱԿԱՆ ՇԵՒԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ,* նկ., գինն է 20 կօպ.

Դիմել՝ Թիֆլիս «Թուտունիերգ», Երևան «Արարատ», Գանձակ Ս. Ժամհարեան գրավաճառանոցներին։

(Հ.Հ.Շ.) 853. 6—5

Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների ձայնագրութեան ուսուցիչ և նոյն քաջաքի Ս. Փրկիչ եկեղեցու

ԽՄԲԱՊԵՏ

Պօղոս Տէր-Կարապետեան, որ երկար տարիներ վարել է ձայնագրութեան ուսուցչի պաշտօն և որը հմուտ է հայկական ձայնագրութեան, ունի վկայական Դէորգեան ճեմարանից և սովորել է յայտնի երաժշտապետ Մ. Եկմալեանի խմբապետական կուրսերում,

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

ցանկացողներին հայկական ձայնագրութեան։ Պայմանների մասին դիմել՝ Ախալցխա, Պօղոս Տէր-Կարապետեանին։

(Հ.Հ.) 841. 5—5

ՀԻՒԱՆԴՆԵՐ, ՁԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂՏԻՒՐՆԵՐԻՑ!

Երևան են եկել մեր Սպէրմինի սակաւաթիւ նմանութիւնները, որոնք ըստ ապրեցութեան ոչ մի առնչութիւն չունեն մերինի հետ, և դեռ յաճախ նրանք պարունակում են իրանց մէջ առողջութեան համար վնասակար նիւթեր։

Նեվրաստենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, բոխաթի, սիճիլիսի, անդիկային բժկութեան հետեւանքների, սուի հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բարախտ, պէրէքոյ, միոկարդիա), **զարկերակի կարծրացումի, ալկօհոլիզմի, ողնուծարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետևանքների, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների գրուածքները։ Գները չափաւոր է։ ուշադրութիւն դարձնել**

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ

անուան վրա և հեռու մնալ դանդան անունների հետևանքներից և հեղինակներից, որոնց սակաւաթիւը. համարեա. ունինք առանձին բրօշիւր, որն ուղ. է ձրի՝ ՍՊԵՐՄԻՆԻՆ մասին եղած նոր գրական. հետ միասին։

ОРІАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ПРОФЕССОРЪ Д-РЪ ПЕЛЬ
Поставщики Двора Его Императорск. Величества
С.ПЕТЕРБУРГЪ
В.О. 7 линія 18.

12—9 (36881. П.)

23 ԱՐԺԷՔԱՒՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ 3 ր. 45 կօպ.



1) Տղամ. գլուխ. էլեգանտ և մաքուր ժամացոյց «Անկէր» (ոչ կիլինդր) անգլ. սև պողպատից, 15 քարով, «Խրօնօմէտր» սլաքաւ., 36 ժամը մի անգամ լարումով, սաուլված մինչև բօպչենքը, 8 տարի երաշխաւորութեամբ։ 2) Երկդիմի չքեղ շղթայ։ 3) Բրէլօկ-կինէմատոգր. պիկանտ տեսարան. կամ թէ կօմպաս։ 4) Ձեռնափչի բանկ ժամաց. վչանալուց պահանջելու համար։ 5) Ձրիով մատանի «Duble» պարիզեան քարով։ 6—9) Դրպանի տուալէտային նէսէսէր 4 հետաքրքր. տարբ.։ 10) Ժամաց. գողերից պահպանող լիր։ 11) Պարիզեան «Պլատօգրաֆի», որ ցոյց է տալիս ամեն տեսարաններ։ 12—17) 6 հատ շատ հետաքրքր. նկարներ «Պլատօգրաֆիի» համար։ 18) Դրպանի նիվել. գրելու պրիքօր։ 19) Ընծեփազօծ գեղ. լուցկարկղիկ։ 20) Դրպանի ծալվող մկրատ անգլ. պողպատից։ 21) Ծխային տապատ բաղկ. մօտ 100 տատից և թանշ.։ 22) Վիակտատոր պրիքօր տապատի համար։ պատից։ 23) Գաշուի նոր-մօդայնի պօրտմօնէ 6 բաժան., շատ տափակ և չատ գրպանում պահելու համար։ Ամբողջ գները միասին վերցրած միայն 3 ր. 45 կ., նոյնօրինակ գարն. բարձր տեսակի տատկանիցից և տատգործուբի գինը 3 ր. 45 կ., 2 գարն. 6 ր. 45 կ., նոյնօրինակ գարն. բարձր տեսակի տատկանիցից և տատգործուբի գինը 3 ր. 45 կ., 2 գարն. 6 ր. 45 կ., նոյնօրինակ գարն. բարձր տեսակի տատկանիցից և տատգործուբի գինը 3 ր. 45 կ., 2 գարն. 8 ր. 45 կ.։ Փակ ժամացոյց կամ կանացի՝ բոլոր յատկուածներով՝ 1 փակ ժամացոյցով 4 ր. 45 կ., 2 գարն. 8 ր. 45 կ.։ Փակ ժամացոյց կամ կանացի՝ բոլոր յատկուածներով՝ 1 փակ ժամացոյցով 4 ր. 45 կ., 2 գարն. 8 ր. 45 կ.։ Փակ ժամացոյց կամ կանացի՝ բոլոր յատկուածներով՝ 1 ր. թանգ։ ձանապարհածախքը 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Ուղարկում ենք վճարից վճարով և առանց կանխավճարի։ 2ր հետաքրքրական պրէմիա 8 ր. արժողութեամբ։ Հասցէագրել՝

Т-ву „ПАТЕНТЪ“. ВАРШАВА. Св. Креста № 48. Отд. 69.

(Հ.) (В. *61357*) 7—4

ԻՐԻՑ ՎԵՍԵԼՕՎՍԿԻՒ եւ հաճգուցեալ պրօֆ. **ԳՐԻԳՕՐ ԽԱԼԱԹԵԱՆԻ**

Ա. ՇԽ. Ա. ՏՈՒԹԻՒՆԸ

„Армянская Муза“ *Ժողովածուն։*

(Րաֆֆ. Պատկանեան—Սմբատ Շահազիզեան—Ալ. Ծատուրեան—Լեւոնց—Ցովհաննիսեան—Ցովհ. Թումանեան—Իսահակեան—Ալիշան—Գեղիկեաշեան—Դուրեան—Սիբիլ և ուրիշներ)։ Մօտ 90 բարգմանութիւններ (Բայմօնթէ, Բունինի, տիկ. Ձիւմինայի, Իւր. Վեսելօվսկիի, Գօլօվաչեվսկիի և այլն)։

Գինը 1 րուբլի։

Հասցէն՝ Москва,—Набережная Храма Спасителя, № 7, кв. 40, Юрію (Георгію) Веселовскому.

857. 5—2 *(օ.մ.)*

Հոյս տեսաւ եւ վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ 1913 Թ. „ՇԻՐԱԿ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՑՔՆԵՐԸ

XV տարի

250 պատկ.—ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑՔ.—250 պատկ.

Պատի օրացոյցի առջին երեսների վրա տպագրված են հայ և օտար, հին և նորագոյն հեղինակների և գրչեիչների պատկերներ։ Ե՛րբ պետական և գաղութական հիմնարկութիւնները տպտա են պարապմունքից. առանձին նշանակված են պօտի պարապմունքի ժամերը և պօտի բոլորովին փակ օրերը։ Իւրաքանչիւր երեսի վրա տպագրված են **ամօրիզմներ, ընտիր մտքեր, առածներ, պատմական դէպքերի ժամանակագրութիւն, բանաստեղծական հառաչներ, մեծ մասամբ իրանց հեղինակների պատկերներով։** Երկրորդ երեսների վրա տպագրված են՝ գիտական նոր-ըութիւններ, բնութեան երևոյթների նկարագրութիւններ, հայկական ծովերի պատմական բացատրութիւններ, հինգանական տվյալութիւններ, բժշկական գիտելիքներ, առողջապահական խորհուրդներ, տղագրական տեղեկութիւններ, զուարճալի պատմուածքներ, պատմական նշանաւոր դէպքեր հայ, ռուս և այլ ազգերի կեանքից, վիճակագրական թուեր և տեղեկութիւններ, խորհրդածութիւններ և կենսագրութիւններ նշանաւոր անձանց, բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր, զուարճալի անեկդօտներ մեծ մասամբ կենդանից։ Տիւրատանեական նորութիւններ, անպրն տնտեսութեան վերաբերեալ կարևոր նրատներ։ Փողոցային երգեր, երգիծաբանական հատուածներ, ծիծաղաշարժ առարկաներ առածներ, և այլն։

Տախտակը պատրաստված է լիտոգրաֆիայում 10 գոյնով և նուիրված է հայ տատերի 1500 և հայ տպագրութեան 400-ամեայ մեծ յօբելեանների։ Ձ և ու ձախ կողմերում ս. Սահակի և Մեսրոպի պատկերը, կենտրոնում, թեան 400-ամեայ մեծ յօբելեանների։ Ձ և ու ձախ կողմերում ս. Սահակի և Մեսրոպի պատկերը, կենտրոնում, թեան 400-ամեայ մեծ յօբելեանների։ Ձ և ու ձախ կողմերում ս. Սահակի և Մեսրոպի պատկերը, կենտրոնում, Մասիսի սառրոտում, ս. Էջմիածինը, ներքևում, ձախ կողմը գուտենբերգեան մամուլը, աջում գիտութեան և գեղարուեստի էմբլեմները։ Մի գեղեցիկ լիշատակ եղաւ մեծ ազգային ծովերի յատերժացման, որը ցանկալի զարդ կլսի պատկերներ։ Երկրորդ նկարը հայի պատմական անցեալից՝ Սաթենիկ և Ադատշէս։ Կարող է համարվել ամեն մի հայ ատն համար